

Այսպէս թէ այնպէս, կառավարութեան կողմէ վաւերացուած փաստաթղթերով ու հրամանադրով ջուրը բերելու աշխատանքը առաջ տարուեցաւ եւ Մայր եկեղեցին ունեցաւ իր անուշ ու պաղ ջուրի մշտահոս աղբիւրը, բաց՝ բոլոր յոգնած ու ծարաւի անցորդներու համար:

Խ. Ն. ՄԱԿԱՐԵԱՆ

Ը.- ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՎԻՃԱԿԸ

Կիւրիինի հայերը այլ եւ այլ կողմերէն եկած են եւ զանազան ժամանակներու ընթացքին: Տեղւոյն այժմու ժողովուրդէն մաս մը եկած է, հին Դերջան դաւառէն, եւ կը կոչուի՝ Դերջենցիք կամ Թերճենցիք, ոմանք՝ Երասխաձորի Պայրում Չայ ծործորէն, եւ կը կոչուին Պայրմչացի կամ ըստ տեղական արտասանութեան Պայամչացի, ոմանք՝ հին Կարկառ ամրոցէն, եւ իրենց նախնի ընտանիքեան այժմու հնչման համեմատ կը կոչուին Կերկերենք: Չեմ երկրայիւր, որ Քոջուենք են Քաջուենք, որ կ'երկի Քաջրերունիքէն եկած են, եւ Մարանենք՝ Մարանդունիէն, Դահմազենք՝ հին Պարսից հրախի գաւառներէն, Նահապետենք եւ այլք:

Կիւրիին բնաւ քահանայ կամ վարդապետ մը չէ եկած կաթողիկէութիւն քարոզելու. բայց կային անոնցմէ. եւ ընտան հետեւութիւնն է՝ որ իրենք հնուց ի վեր կաթողիկէ էին: Այս կը հաւաստէ նաեւ այնու որ Թերճենցիք շատոնց նոյն դաւանութեան մէջ կը գտնուէին: Արրահամ կաթողիկոս իր տոմարին մէջ կը յիշէ 1741ին Աբարկոս (Արրա Մարկոս) Թէրճէնեան՝ եւ իր հայրն, եւ մեծ հօրը (պապուն) Մ. Յարութիւնի հոգւոյն պատարազ կը մատուցանէր. նոյնպէս կը յիշէ Մ. Մանուկ Տէվէճեան, եւ ասոնց կաթողիկէ ըլլալուն թուական մը չէ նշանակուած: Նոյնպէս Նահապետենք (Կարապետենք), Մարաֆենք, Սիմառնենք հին ընտանիք են. կան նաեւ Հէքիմենք որ շատ հին ցեղ մ'է որոնցմէ ոմանք Հալէպ դաղթեր են, եւ անկից մաս մը Լիբանան եկեր բազմացեր են, ոմանք պահեր են իրենց մականունը Բժշկեան, արաբերէնի թարգմանելով, որ է Պէյթ-Թապիպ, եւ ուրիշներ առաջին անգամ Լիբանան եկողին անունով կը կոչուին Պէյթ Մուրատ: Ընդունած են Մարոնի ծէսն եւ կը յիշեն իրենց հայ ծաղումն: Վերը յիշուած Նահապետեան գերդաստանին պետն Յովսէփ Կիւրիւնցի որ կը յիշուի Չմմառ յանքին մշտնջենաւոր պատարազաց պլուխն (իբր 1760). ինքը վաճառակա- նութեամբ Բերիա կ'երթար եւ կը դառնար: Ասոնք ամէնը յայտնի կը ցուցնեն որ նոր սկսուած կաթողիկէութեան վրայ դաղափար մը չկայ:

Միայն Պայրամ-Չայցի տոհմին մէկ մասին մէջ կայ աւանդութիւն մ'առանձնական հետեւեալ կերպով: Թէ նոյն տոհմէն (որ այժմ 300 տունէն աւելի են) Յարութիւնի որդին Եղիազար, որ կը յորջորջուի եղեր Կոծիկ Աղըզար, եւ վաճառականութեամբ կը պարապի եղեր, Տրապիզոն կ'երթար կու դար: Ժամանակն անձանօթ է, Բրդնիկայ պատմութիւնը՝ ընդունած բերանացի տեղեկութեանց համեմատ, յարմարցուցեր է այն ժամանակին, յորում Արրահամ վարդապետ Արծիւեան՝ արքեպիսկոպոս Հալէպի՝ կը վարէր Տրապիզոնի առաջնորդութիւնը 1714-1717 տարիներու միջոցին: Եղիազար անոր քարոզները լսելով եւ լուսաւորուելով, եկեր նաեւ իր եղբայրները համոզեր է, որոնք էին Մ. Աւետիք Պայամչա, Ալեքսանդրոս եւ Տիշտիշ, որոնց-

մէ սերած են Եղիազարենք, Պայամշոնք, Աղեքսանդրենք, Տիշտիչենք եւ
Խնկիկենք, Մ. Աւետիկենք: Ասոնց մէկ երկուքը կը յիշէ Աբրահամ կաթողիկոս
իր պատարագի տոմարին մէջ՝ 15 Մայիս 1740ին որոնք նուէրներ ղրկած էին
իրեն, եւ են Մ. Աւետիք, Մ. Յակոբ, Մ. Մանուկ, Մ. Աղեքսանդրոս Նոր-
Արեւ եւ Յովնան Օրհնեալ. վերջապէս ասիկա տոհմի մը պատմութիւնն է:
Բայց կայ նոյն աւանդութեան մէջ կարեւոր կէտ մը, որ մտադրութեան ար-
ժանի է: Այսինքն երբոր եղբայրներն իմացան Եղիազարին միտքն, քննեցին
միաբան իրենց Տիշտիչ եղբորը ձեռքով, որ տիրացու էր եւ արեւի եղածին
չափ հմուտ Երրորդութեան եւ Մարդեղութեան խորհուրդներուն եւ եկե-
ղեցւոյ յօրինուածութեան եւ ննջեցելոց վրայ. համաձայն դասն անոր ըսած-
ներն իրենց դիտարածին հետ, եւ միաբանեցան անոր հետ:

Այս ամէնքը չունէին իրենց վրայ հսկող քահանայ մը ժամանակին կա-
թողիկէ նուիրապետէ կամ եպիսկոպոսէ մը կախուած, եւ հալածանքը կը
նեղէր զիրենք, եւ մեծ երկպառակութիւն մը կը տիրէր. մկրտութիւն, թա-
ղումը եւ պսակը տեղւոյն քահանայից քով կ'ըլլային: Առաջին անգամ իրենց
համար քահանայ ձեռնադրուեցաւ յամին 1782 Յովնան Կիւրիսի, Սեբաստիոյ
Հրեշտակապետի վանքն, Արեւ Եպիսկոպոսէն. թէպէտ Բրդնկայ պատմութիւն
կը համարէ թէ Սեբաստիոյ առաջնորդ էր, բայց ինձ հաւաստի չի թուիր,
զի այն ժամանակ Եղիազար էր Սեբաստիոյ արքեպիսկոպոսը: Կրնայ ըլլալ
որ Արեւ Հրեշտակապետ վանքին առանձին առաջնորդն էր, եւ ինչպէս կը
տեսնուի իրեն վրայ եղած խօսքերէն՝ կաթողիկէայ: Այս Տէր Յովնանէն սե-
րած են Ունանենք՝ որ այժմ քանի մը տուն կը կազմեն:

Եղիազարենք որդեգրած էին իրենց Մարանեան Խաչիկն, որ Լիբանան
Չմմառ ղրկուելով քահանայ կը ձեռնադրուի, յամին 1764, եւ Կիւրիսի դառ-
նալով Տէր Յովնանին հետ խորհուրդ կը մատակարարեն դադտուկ եւ իրենք
պահուած կը մնան, ղիմադրաց երկիւղէն:

Նահապետեան Յովսէփայ որդին Աբրահամ, Չմմառ կ'երթայ եւ 16
Մայիս 1765ին քահանայ կը ձեռնադրուի Միքայէլ կաթողիկոսի հրամանաւ՝
աթոռակալ Բարսեղ եպիսկոպոսէն: Կը դառնայ հայրենիք եւ հոգ կը տանի
ժողովրդեան Տ. Խաչիկի հետ ամենայն փութաջանութեամբ, բայց շատ
դժուարութեանց մէջ կ'իյնան: Ահա յանկարծ հիւանդութիւն կը պատահի,
մեռելներ կ'ըլլան, բայց հայ քահանայք չեն թաղեր զանոնք, խնդիրը կը
ծանրանայ եւ կառավարութեան միջամտութեամբ կը ստիպուին թաղել:
Խնդիրը կ'ելլէ Սեբաստիոյ կուսակալին ատեանն, եւ նա սուրհանդակ կը
ճամբէ Կիւրիսի, եւ երկար բարակ քննութենէ ետք կ'որոշուի որ կաթողիկէ
քահանայք մկրտեն եւ թաղեն իրենց կողմն եղողներն, սակայն վճարեն ա-
ռաջնորդական տուրքը:

Եւ որովհետեւ վաճառականութեան համար Սեբաստիա կը յաճախէին,
այս առթիւ եւս շատ նեղութիւններ կրեցին: Ուստի կաթողիկէ իշխանք ա-
պաստանեցան Եռզրատ Չափան-Օղլու անուանեալ պետաց, ինչու որ Կիւրիսին
իրենց կը վերաբերէր: Հոն մեծ դատ եղաւ հայ ազգին երկու մասանց մէջ,
եւ կաթողիկէանք նպաստաւոր ելան եւ յաջողութեամբ դարձան: Եւ այնուհե-
տեւ մնաց Տէր Աբրահամ հանդարտ իր պաշտաման մէջ մինչեւ 1828, եւ ի խոր
ծերութեան հանգեաւ ի Տէր սրբակրօն վարքով:

Իրեն օգնական եղած են, հետզհետէ, Տէր Խաչիկ Մարանեան. նոյն-
պէս՝ Չմմառէն Թողաղիք, Տ. Բարսեղ Գրյորճեան եւ Տէր Մատթէոս Գա-

զանճեան, ապա Տէր Պետրոս Հիւրմիւղեան Կիւրինցի եւ վերջապէս Տ. Յակոբ Ճգնաւորեան, որ յամին 1828 փոխադրուեցաւ Սեբաստիա, ուր եւ հանդեաւ ի Տէր:

**

Թւական իրաւաբանութեան նկատմամբ յուզուած խնդիրը վերջ գտեր էր եւ 1769-ին տրուած վճիռով որոշուած էր որ Թողաղ եւ Բրզնիկ կը վերաբերին Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռոյն: Ուստի Միքայէլ Պետրոս Գ. սահմանեց, որ ամբողջ Սեբաստիոյ վիճակն ըլլայ թեմ հայրապետական: Եւ յամին 1774 իրեն փոխանորդ կամ տեղապահ կարգեց Կ. Օդոստինոսն, երկուքն եւս միաբանք Զմմառի, հասաւ Թողաղ, Գարասարցի Յովհաննէս վարդապետին անկից մեկնելէն առաջ:

Այս հռչակաւոր վճռէն ետեւ եւս Գեր. Աթանաս եպիսկոպոսի կողմէ տակաւին նոր դժուարութիւններ մէջտեղ կ'ելլէին. յամին 1777 Ապրիլ 19ին տրուած վերջնագոյն որոշում մը խնդիրը կ'աւարտէր բոլորովին, թէեւ ժողովրդեան մէջ կը մնար կողմնակցութիւն մը, որ հետզհետէ վերցուեցաւ:

Այս միջոցին, այսինքն 1786ին, պատարագաց տումարին մէջ ի Զմմառ կայ գրուած անկատար մարդահամար մը Կիլիկիոյ պատրիարքութեան ժողովրդոց. ուր Սեբաստիոյ նահանգին համար նշանակուած է հետեւեալ ցուցակը: Սեբաստիա՝ 70, Թողատ 700, Բրզնիկ՝ 900, Կիւրին՝ 330, ընդհանուր 2000 անձ:

Հոս շատ ցաւալի է տեսնելն՝ որ Սեբաստիա փոխանակ 60, 70 տներու կը ներկայացնէ միայն 70 անձ. Թողատի բնակիչն եւս նուազած կը տեսնուի, ուր քիչ մ'առաջ դրուեցաւ որ 200 տուն կար. Բրզնիկ եւս նուազութիւն մը կը տեսնուի, եթէ ասոնք վրիպակ մը չըլլան: Իսկ Կիւրնոյ ժողովուրդը յամին 1795ին եղեր են 332:

Հալածանքէն վերջը կ'երեւի թէ կաթողիկէից թիւը նուազում մը կրած է: Կայետանոս Մարոնի իր ընդարձակ ուսումնական բառարանին մէջ Կիլիկիոյ պատրիարքական աթոռին վրայ խօսելով Բրզնիկ եւ Սեբաստիա կը ղնէ 70-80 տուն ուր երեք չորս քահանայք հրապարակական պաշտօն կը կատարէին: Ունէին եկեղեցի (Բրզնիկ). Թողատ 160 տուն. եւ Կիւրին 40 տուն եւ մէկ քահանայ: Իբր 50-60 տարուան մէջ նշանաւոր թիւ մը պակասած ըլլալու է, զոր ես չեմ կարծեր եւ մասնաւորաբար Բրզնիկայ համար. ինչու որ քիչ մը ետքը նշանակուած թիւը պէտք էր համարել արտակարգ սոճում:



Յովհան վարդապետ Կիրակոսեան Եէնի-Սանցի.— Կաթողիկոսական փոխանորդ անուանուեցաւ Յովհան վարդապետ Կիրակոսեան Միաբան Զմմառի յամին 1793 որ հետն ունենալով Անտոնեան կրօնաւորներէն Հ. Ստեփան՝ Թողատի համար եւ Հ. Փիլիպպոս՝ Բրզնիկայ, ճամբայ ելաւ: Կիրակոսեան վարդապետին համար մեծամեծ դովեստներ դրուած են Բրզնիկայ պատժութեան մէջ, ուր կը յիշուի իր փութաջանութիւնն ու եռանդը հոգւոց փրկութեան համար, բարեպաշտութիւնն եւ մանաւանդ ջերմեռանդութիւնն առ Տիրամայր կոյս Աստուածածին:

Հալէպի ճամբով հասաւ Կիւրին, եւ հոն կեցաւ մէկ քանի օր, եւ ըրաւ

պէտք եղած բարեկարգութիւնը. հաւանութեամբ զլիսաւոր իշխանաց եւ ժողովրդապետ Տեառն Արքահամու՝ կարգեց իրենց դահերէց մը, Թէրճէնեան Եղիա, եւ որոշեց իրեն երեք խորհրդակից, որ տեղւոյն գործերը կարգէր ղենն, եւ այս եղաւ 1793 Նոյեմբերին: Յիշեցուց իրենց պարտքերը նկատմամբ հայրապետական աթոռոյն եւ ամէնքն յանձնառու եղան կատարել իր որոշումներն, բայց Չափան Օղլու Կիւրին եկաւ, որ երթայ Ալպատանն առնու, նորէն տարածայնութիւն մը պատահեցաւ:

Յովհան վարդապետ Կիւրինէն մեկնելով ղնաց Թողատ ուր կային Հ. Ռափայէլ Անտոնեան կրօնաւոր եւ Տ. Օղոստինոս միաբան Չմամառի, որ Հ. Ռափայէլ վանք դառնայ՝ համաձայն հրամանի կաթողիկոսին, եւ գրութեան իր Արքահօր. Յովհան վարդապետ եւս ստիպեց. շատ մը դժուարութենէ ետք վերջացաւ այս գործը: Փոխանորդը շատ մը բարեկարգութիւններ ըրաւ թէ Թողատ եւ թէ Բրզնիկ: Սահմանեց նաեւ քահանայից եւ առաջնորդին պատարագաց թոշակը. նոյնպէս կաթողիկոսական աթոռին տրուելիք տասանորդն, որ ամէն ազգաց քով հասարակ է: Կարգաւորեց նաեւ տեղական առտնին գործերն, եւ խաղաղութիւնն հաստատեց որչափ կարելի էր: Եւ յամին 1811 վանք կոչուեցաւ ըստ կամաց կաթողիկոսին եւ Չմամառ գտնուող եպիսկոպոսաց խնդրովն եւ համաձայնութեամբ. եւ յամին 1812 եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Դամասկոսի տիտղոսիւ. Չմամառ մնաց այնուչետեւ եւ իր կեանքն կնքեց եւ հանդեաւ ի Տէր սրբակրօն վարքով (12 Յուլիս 1821):



Միջայէլ արքեպիսկոպոս Կեսարիոյ.— Յամին 1830 ներքին տարածայնութիւն մը տեղի ունեցաւ, Աստարճեան վարդապետին այն կողմերը դալովն: Եւ որովհետեւ Յարութիւն վարդապետ Շիրինեան արդէն վախճանած էր, Գրիգոր-Պետրոս Ա. կաթողիկոսական փոխանորդ անուանեց Կեսարիոյ Միջայէլ արքեպիսկոպոսն որ 1831 Մարտ 3ին մեկնելով Չմամառէն հասաւ Թողատ: Եւ իր ներկայութեամբ խաղաղեցաւ ամէն բան եւ վերցաւ ամէն խողովրդաւորը եւ անդորրութեամբ վարեց իր պաշտօնը մինչեւ 1843: Իր իշխանութեան կը պատկանէին Սեբաստիա, Թողատ, Կիւրին եւ Բրզնիկ. եւ իր առաջնորդութեան ժամանակ շինուեցաւ նոյն կողմերու եկեղեցիներն: Բրզնիկայ Ս. Սարգիս եկեղեցին նորոգեցին ի հիմանց ընդարձակելով, յամին 1834. Թողատ կառուցուեցաւ նոր եկեղեցի յանուն Ս. Կոյս Աստուածածնի յամին 1829. այս շէնքերուն ծախքը վճարեցին տեղեաց բարեպաշտ ժողովուրդը, թերեւս արքունի հրովարտակաց ծախքն ի բաց առեալ: Քանի մը տարի վերջը (1845) կառուց Սեբաստիոյ Ս. Վլաս եկեղեցին բարեյիշատակ Յակոբ վարդապետ Ճոնաւորեան միաբան Չմամառի, քովի փոքրիկ առաջնորդարանին հետ իր անձնական ջանքովն ու դրամով:

Հին ատեն Բրզնիկայ քահանայք չէ թէ եկեղեցւոյ քով առաջնորդարանը կը բնակէին, այլ առանձին տեղեր՝ անոնք որ դրսէն կու գային. իսկ նոյն գիւղէն եղողները իրենց տունը: Տփխիսեցի Հ. Անտոն առաջին անգամ հաւաքեց զիրենք եկեղեցատունն, եւ աստուածային պաշտաման համար բարեկարգութիւններ սահմանեց: Յովհան վարդապետ Կիրակոսեան իր առաջնորդութեան ժամանակ նոյները աւելի կարգաւորեց, նաեւ դպրոցի հոգ տարաւ: Մեծագոյն եղաւ այս ամէն իրաց վրայ Միջայէլ արքեպիսկոպոսի խնամքն, որ հետզհետէ եկեղեցիներ, առաջնորդարաններ եւ դպրոցներ կա-

նուցանելու հոգ տանելով, բարեկարգեց եւ բարեզարդեց զանոնք՝ ի մասնաւորի Բրգնիկ, Թոգատ եւ Կիւրիւն:

Միքայէլ արքեպիսկոպոս յամին 1843 կաթողիկոսի ընտրութեան սինհոդոսէն Չմմառ կոչուեցաւ. ինքը ինչպէս 1840ին ըրած էր, այս անգամ եւս կ'ուզէր հրաժարիլ, բայց վերնագոյն մեծաւորներէ ստիպուած զնաց սինհոդոսին եւ ընտրուեցաւ միաբան քուէիւք Հայրապետ Տանն Կիլիկիոյ եւ ԻԲ. տարի եւ կէս՝ վարելով աթոռին տեսութիւնը եւ զարդացնելով զայն շատ կերպով, հանդեաւ ի Տէր սրբակրօն վարքով, եւ օրինակ բարի թողլով ամենուն, մասնաւոր իր սիրելի հոգեւոր օրդւոց միաբանից Չմմառի, ի մասնաւոր ի սրբութեան, իմաստութեան եւ խոհական վարչութեան մէջ:



Իդնատիոս Գալլպճեան արքեպիսկոպոս. — 1844ին Սերաստիոյ նահանգին կաթողիկոսական փոխանորդ կարգուեցաւ Ամասիոյ արքեպիսկոպոսն, որ կը կոչուէր առաջնորդ Եւզոկիոյ, նոյն տարին Սեպտեմբեր 8-20, Չմմառէն մեկնելով եւ Թոգատ հասնելով վարեց իր պաշտօնը մինչեւ 1852:

Գրիգոր կաթողիկոս գործունեայ կերպով սկսաւ աշխատիլ թեմերուն զարգացման համար, միանգամայն եւ Չմմառեան միաբանութեան յառաջընթացութեանն եւ առաքելութեանց ծաղկելուն: Իր բարձր հրամանին համեմատ, յամին 1848, զնուեցաւ Թոգատ Առնալա թաղին մէջ եկեղեցւոյ եւ առաջնորդարանին կից ընդարձակ տուն մը պարտէզով, որ ունի առատ ջուր: Նորօգիցին նոյն տունն եւ իրենց կից պարտէզն եւ կարելի եղածին չափ ձեւաւորելով, կարգեցաւ փոքր ընծայարան, Չմմառի կեդրոնական ընծայարանին շփանդակ ըլլալու համար: Գնման, նորոգութեան եւ կարգաւորութեան ծախքերն եղան Չմմառի վանքէն, իբր հազար ոսկի: Առաջին մեծաւորն եղաւ Յովսէփ վարդապետ Կիւլեան կարնեցի, որ կիւրիւնցի Աբրահամ Վ. Կարասեանի հետ, քանի մը աշակերտներով հասաւ նոյն քաղաքն. եւ իր պաշտաման մէջ տարի մ'աւարտելէն առաջ հանդեաւ ի Տէր եւ իրեն յաջորդեց Աբրահամ Վ. մինչեւ 1855: Օգնական էր իրեն եւ դասատու Ներսէս Վ. Հալէպլեան, եւ առոնց աշակերտներէն ելան ութ քահանայ, Ներսէս Վ. ելաւ դպրոցէն 5 տարի պաշտօնը վարելէն ետք, եւ Աբրահամ Վ. երեք տարի յետոյ, սրբակաց վարքով կնքեց իր կեանքը:

Փոքր ժամանակ մը պարապ մնաց նոյն ընծայարանն եւ ապա յաջորդ եղաւ 1856-ին Ղեւոնդ Վ. Խորխոռունի Բրգնիկէն, որ Եւքուպեան Պօղոս Վ.ին հետ միաբանելով, Բոճաճուք ըստած տեղը գեղեցիկ եռայարկ վանք մը շինեցին ընդարձակ պարտէզի մէջ, ամենալաւ դիրքի մը վրայ: Չորս տարի ետք Ղեւոնդ Վ. փոխադրուեցաւ Մալաթիա, գլուխ կարգուելով այն նոր առաքելութեան գոր լաւ ծաղկեցուց:

Եւ բովհետեւ այս շէնքերուն եւ այլ զնումներու եւ գործոց համար կը մնային ծանր պարտքեր, որոնք մեծ մտադրութեան արժանի էին, հետեւաբար անոնց հոգը յանձնուեցաւ կարող ձեռքերու եւ խոհական փութաջանութեամբ տարուելով գործն ելաւ իր դժուարին վիճակէն:



Ինչպէս վերը բացատրուեցաւ, յաճախ Սերաստիոյ անունին կապուած են կուսակալութեան Հայ-Կաթողիկէները, սակայն իրականութեան մէջ կուսակալութեան միայն երեք քաղաքներուն, Սերաստիոյ, Թոգատի եւ Կիւրիւ-

նի եւ 1 դիւղի՝ Բրզնիկի մէջ, Հայ-Կաթողիկէներ դտնուած են, եւ կուսակա-
լութեան կեդրոնին՝ Սեբաստիոյ մէջ անոնց թիւը շատ աննշան եղած է, հե-
տեւաբար Թողատ եղած է գրեթէ միշտ նստոցը շրջանին առաջնորդներուն
կամ հողեւոր պետերուն, գրեթէ թեմին կազմակերպութեան մինչեւ վերջը,
իր հովուութեան շրջանակին մէջ ունենալով Բրզնիկը, Սեբաստիան եւ Կիւ-
րինը:

Այս չորս վիճակները թեմին, 1830ին Հայ-Կաթողիկէ հասարակութեան
ճանաչումէն յետոյ ունեցան իրենց եկեղեցիները, ինչպէս նաեւ առաջնորդա-
րանները եւ դպրոցները:

Եւզոկիացի Իզնատիոս Վրդ. Գալլապճեան, որ 1842-ին ձեռնադրուած
էր տխտղոսաւոր արքեպիսկոպոս Ամասիոյ, 1844ին Թողատ գնաց իբր «Կա-
թողիկոսական Փոխանորդ Սեբաստիոյ նահանգին եւ Առաջնորդ Եւզոկիոյ»
եւ հոն մնաց մինչեւ 1852: Իր այս պաշտօնավարութեան շրջանին, ան արդա-
րացուց իր տխտղոսը, երթալով Ամասիա, իրեն հետ ունենալով Չմամաեան
մի քանի միաբաններ եւ յաջողելով հոն՝ Ամասիոյ, ինչպէս նաեւ Մարզուա-
նի, Վէզիր Քէօփրիւի եւ այլոց մէջ կաթողիկոսութեան հետեւողներ գտնել
(Պատմ. եպիսկոպոսական արձանագ պատրիարքալուքեան Կիլիկիոյ, 45), որոնց
հովուութիւնը իրմէն կախում ունէր:

Այս կերպով թեմը կ'առնէր աշխարհադրապէս շատ ցրուած վիճակ մը,
Կիւրինէն մինչեւ Թողատ, Ամասիա եւ Մարզուան, ուստի 1851ին կ'որոշուի
իրարմէ հեռու այս քաղաքները կազմակերպութեան մը ենթարկել:

Հետեւաբար նախորդ կաթողիկոսական կամ պատրիարքական թեմը,
կը ստորաբաժանուի չորս մասերու.

- 1.- Թողատ կը կարմէ առանձին թեմ մը:
- 2.- Սեբաստիա՝ Բրզնիկով կ'ըլլայ առանձին թեմ մը:
- 3.- Կիւրին առժամապէս կը մնայ կաթողիկոսին կողմէ նշանակուած
փոխանորդի մը տեսչութեան տակ:
- 4.- Ամասիա, Մարզուան եւայլն կը կցուին Տրապիզոնի թեմին:

Սակայն այս բաժանումը 1858ին հազիւ գործադրութեան դրուած,
1866ին երկու անջատ առաջնորդութեանց առանձին առանձին առաջնորդներ
գտնելու դժուարութեան առջեւ, դարձեալ միացուեցաւ:

Անտոն Պետրոս Թ. Հասուն նոր կաթողիկոս-պատրիարքը, որուն
ընտրութեամբ Հայ-Կաթողիկէ նուիրապետութեան մէջ գոյութիւն ունեցող
երկուութիւնը վերջ կը գտնէր, Լիբանանի կաթողիկոսութեան եւ Կ. Պոլսոյ
ազգապետութեան միացմամբ, կրկին միացուց իրարու Սեբաստիան եւ Թո-
ղատը, անոնց կցելով նաեւ Կիւրինը, եւ կաթողիկոսական փոխանորդ մը
կամ տեղապահ մը նշանակեց:

Այս կարգադրութեամբ կը ջնջուէին նախկին թեմական բաժանումները
եւ հին վիճակը կը վերահաստատուէր:

Ա. ՎՐԴ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ